

Համացանցի իրավական կարգավորման հայկական և միջազգային փորձը

Բ. Գ. Թ. Վարդուհի Պետրոսյան

ԵՊՀ, Ժուռնալիստիկայի ֆակուլտետ

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտը ձևավորվել է վերջին մի քանի տասնամյակի ընթացքում: Այս ասպարեզը տարիներ շարունակ ենթակա է եղել պետական քաղաքական գործուն միջամտության (աջակցություն նորարարական աշխատանքներին ու դրանց տարածմանը, երկարաժամկետ օջանդակություն գիտահեռադատական նախագծերին և տեխնոլոգիական ենթակառուցյուններին), որը, նպատակ ունենալով խթանել այդ ոլորտում կատարվող փոփոխությունները, միաշամանակ առաջնորդվում էր տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան քաղաքակրթությունների, ռազմավարությունների ու զարգացման ծրագրերի հունում տեսնելու անհրաժեշտությամբ¹:

20-րդ դարից սկիզբ առած տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն իր անմիջական ազդեցությունն ունի զանգվածային հաղորդակցության միջոցների կերպարափոխման վրա: Եթե սկզբնական շրջանում ինտերնետը շատերի համար ճոխություն էր, այսօր այն դարձել է հասարակության մեծ մասի կենսակերպի անբաժան մասը: Ավելին, ինտերնետն այժմ հասանելի է բոլորին. ամբողջ աշխարհում միլիոնավոր մարդիկ հնարավորություն ունեն անսահմանափակ ձեռք բերել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը տարբեր ոլորտների մասին:

Վերջին տարիներին Հայաստանի միջազգային ինտերնետային կապի թողունակությունն աճել է շուրջ 10 անգամ՝ 1083 Մբիթ/վրկ-ից հասնելով 10547 Մբիթ/վրկ-ի: Այդ մասին նշված է ՀՀ կառավարության կողմից մարտի 29-ին հաստատված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2012 թ. ծրագրում»²: Ծրագրում նշվում է նաև, որ ներքին ինտերնետ կապի թողունակությունը աճել է շուրջ 8 անգամ՝ 434 Մբիթ/վրկ-ից հասնելով 3681 Մբիթ/վրկ-ի:

Ըստ report.gov.am կայքի՝ ՀՀ բնակչության ինտերնետ հասանելությունը 5%-ից աճել է՝ կազմելով շուրջ 44%: Ինտերնետ բաժանորդների քանակը հասել է 380 հազարի (յուրաքանչյուր երկրորդ ընտանիք): Բարձրացել է նաև ինտերնետ կապի որակը՝ 99%-ին մատուցվում է լայնաշերտ ինտերնետ կապ:

Ինտերնետը հաղորդակցության միջոց լինելուց զատ, մերօրյա տեղեկատվական հասարակության շարժիչ ուժն է: Ավանդական լրատվամիջոցների կողքին այն լուրջ մրցակից է իր օպերատիվության, այժմրոպեականության շնորհիվ: Այս մթնոլորտում, բնականաբար, մրցակցությունն անխուսափելի է: Այդ իսկ պատճառով այսօր

¹ Եվրոպայի ուղին դեպի տեղեկատվական հասարակություն, «Վան Արյան», Երևան, 2000, էջ 6:

² www.news.am

ինտերնետում պայքար է սկսվել բովանդակության համար: «Ավանդական լրատվամիջոցներում էթիկական չափանիշներին և պրակտիկային կառչում են բնագոյաբար»³, իսկ ինտերնետային նյութերում դրանց պետք է անընդհատ հետևել: Եթե մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը կարգավորվում են երկրում գործող համապատասխան օրենքներով ու միջազգային իրավական այլ ակտերով, ապա ինտերնետն այս առումով բարձիթողի վիճակում է: Մինչև վերջերս մեզանում չկար ոչ մի օրենք, որով կսահմանվեր ինտերնետային հեռարձակումը:

2007թ. ապրիլի 9-ին ընդունվեց «**Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին**» ՀՀ օրենքը: Այն կարգավորում է «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հրապարակային ծանուցման՝ ինտերնետով իրականացման կարգն ու պայմանները»⁴: Սակայն օրենքը չի նախատեսում տեղեկավորության հրապարակմանն առնչվող այլ հարցեր: Սա լուրջ բացթողում է, քանզի օն-լայն միջավայրում մի կողմից նկատելի է հասարակության ապատեղեկատվություն ստանալու միտումը, մյուս կողմից խախտվում են հեղինակային և այլ իրավունքներ: Հետևաբար, այս և այլ խախտումները բացառելու կամ հնարավորինս կրճատելու համար ինտերնետի կարգավորումն անհրաժեշտություն է: Մի շարք մասնագետների կարծիքով ճիշտ է ոլորտի ինքնակարգավորումը, քանզի էթիկական հիմնախնդիրներն ավելի ակնառու են:

Ինտերնետի իրավական կարգավորմանն ուղղված միջազգային փորձի վերլուծությունը կարելի է սկսել հենց վերջինիս հայրենիքից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Դեռևս 20-րդ դարի 90-ականների կեսերին ընդունված իրավական շատ ակտեր, որոնք սահմանափակում էին էլեկտրոնային հաղորդակցության բովանդակային հոսքը՝ այդպիսով փորձելով երեխաներին ապահովագրել վնասակար տեղեկատվությունից, համարվեցին հակասահմանադրական և դադարեցին գործել: Ամերիկյան դատավորները պնդում էին, որ համակարգի անհատական բովանդակային զտումն ավելի ժողովրդավարական է ու արդյունավետ: Նրանց այս տեսակետը պաշտպանեցին նաև Արևմտյան Եվրոպայի շատ երկրներ, որտեղ տեղեկատվության բովանդակային վերահսկողության ողջ պատասխանատվությունը դրվեց ինտերնետ-օգտագործողների վրա: Ավելին, Եվրոխորհուրդը կյանքի կոչեց "Poesia" անունով նախագիծը, որի նպատակը համաեվրոպական «բովանդակային զտիչի» ստեղծումն էր: Միացյալ Նահանգներում սեպտեմբերի 11-ի հայտնի դեպքերից հետո իրավիճակը փոխվեց: Շատ երկրների կառավարությունները, գիտակցելով օրեցօր զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաներից եկող նոր վտանգը, հիմնական ուշադրությունը սևեռեցին տեղեկատվության բովանդակության վրա:

Երբ 2010թ. փետրվարի 1-ին Բելոռուսիայի նախագահ Լուկաշենկոն ստորագրեց ինտերնետ կայքերի գործունեությունը կարգավորող հրամանագիր, միջազգային տարբեր կառույցներ անմիջապես բացասաբար արձագանքեցին: Եվրոմիությունն այն որակեց որպես «խոսքի ազատության հերթական

³ Ռուլանդ Դե Վոլկ, Օնլայն ժուռնալիստիկա, Երևան, 2003, էջ 147:

⁴ ՀՀ օրենքը «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին», Հոդված 1, Երևան, 2007:

սահմանափակում»⁵: Նույն կարծիքն արտահայտեց նաև «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպությունը՝ հավելելով, որ «Նման մեթոդներ կիրառում են մի շարք այլ պետություններ, որոնց կարելի է անվանել «ինտերնետի թշնամիներ»⁶: Դրանք են՝ Չինաստանը, Բիրման, Վիետնամը, Արաբական էմիրությունները, որոնք հատուկ ուշադրություն են դարձնում այն ամենի վրա, թե ինչ են անում իրենց քաղաքացիներն օն-լայն միջավայրում: Չնայած այս ցանկում ամենացավալին Չինաստանի վիճակն է, որտեղ արգելված են շատ սոցիալական կայքեր: Արդյունքում այսօր «չինական ինտերնետը կամ սինետը համեմատում են ՉԹՕ-ների հետ. շատերը գիտեն դրա մասին, բայց քչերին է հաջողվել իրականում տեսնել այն»⁷:

Ինտերնետի կարգավորման կոշտ քաղաքականություն է վարում նաև իսրայելական պետությունը: Այստեղ ինտենետային կայքերի պատասխանատուները պետք է հատուկ թույլտվություն ստանան պետական մարմիններից՝ հրապարակելու այն տեղեկությունները, որոնք ուղղակի կամ անուղղակի կարող են վտանգի տակ դնել պետության և նրա քաղաքացիների անվտանգությունը:

Եվրոմիության երկրներում ինտերնետը կարգավորվում է ինչպես Միության ընդունած համապատասխան հանձնարարականներով, այնպես էլ յուրաքանչյուր պետության ներքին օրենսդրությամբ: Օրինակ՝ Գերմանիայում և Շվեյցարիայում պայքար է տարվում նեոնացիստական և հակասեմիտական ուղղվածության, իսկ Մեծ Բրիտանիայում՝ ծայրահեղական և անբարո կայքերի դեմ:

Իսկ ահա Ռուստատում այսօր պետական մասշտաբով է քննարկվում այն հարցը, որ «Անհրաշեշտ է ինտերնետի խելամիտ կարգավորում: Ձեռնարկել այնպիսի քայլեր, ինչպիսիք կիրառում են ԱՄՆ, Չինաստանը և այլ պետությունները»⁸, - «Արգունենտի ի ֆակտի» թերթին տված հարցազրույցում ասել է Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշևը:

Կիբեռնապաշտպանության այս ընդհանուր համապատկերում հետաքրքիր է վիրտուալ աշխարհի կարգավորման ավստրալիական փորձը: Այստեղ մեկտեղված են պետական իրավական կարգավորման ու ոլորտի ինքնակարգավորման տարրերը: Այս մոտեցումն ստացավ «համակարգավորում կամ համատեղ կարգավորման օրակարգ»⁹ անվանումը, որը կյանքի կոչվեց 2000թ-ից: Պատասխանատուներն են Ինտերնետ արդյունաբերության ասիցիացիան (Internet Industry Association) և ավստրալիական հեռուստառադիո հանձնաժողովը (Australian Broadcasting Authority): Երկրում լուրջ դերակատարություն ունի նաև NetAlert կազմակերպությունը, որը ծավալում է իրազեկման գործունեություն՝ ընտանիքներին և երեխաներին միաշամանակ տեղեկացնելով ինտերնետի ճիշտ օգտագործման ու վնասակար ազդեցության մասին:

⁵ www.wikireality.ru/wiki/

⁶ Նույն տեղը:

⁷ Նույն տեղը:

⁸ www.gazeta.ru

⁹ www.wikireality.ru/wiki/

Հայաստանում իրավիճակը գրեթե նույնն է: Վերջին երկու տարիների ընթացքում մի կողմից կտրուկ ավելացել է ինտերնետ օգտագործողների թիվը, մյուս կողմից՝ բլոգոլորտը և սոցիալական տարբեր կայքերը դարձել են տեղեկատվական հասարակության շարժիչ ուժը: Այս իրավիճակում ինչպես և ամբողջ աշխարհում, անհրաժեշտ է օն-լայն միջավայրի իրավական կարգավորումը: Չնայած ինտերնետ միջավայրի իրավական կարգավորումը կարող է պարունակել ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակող դրույթներ, բայց միևնույն ժամանակ վերահսկողության բացակայությունն էլ կարող է հանգեցնել տեղեկատվական ամենաթողության: Անվերահսկելի վիրտուալ միջավայրն իր դրական ազդեցությունից բացի, լուրջ վտանգ է խոցելի խմբերի, հատկապես՝ երեխաների համար: Այս առումով բովանդակային վերահսկողությունն ավելի է կարևորվում: Շատ փորձագետներ առանձնացնում են մի շարք գործոններ, որոնք ժամանակակից աշխարհում ազդում են ինտերնետ քաղաքականության ձևավորման ու զարգացման վրա: Դրանք են՝

1. «Տնտեսության զարգացածության աստիճանը,
2. ինտերնետի հասանելիությունն ու մատչելիությունը սովորական քաղաքացիների շրջանում,
3. քաղաքացիական հասարակության զարգացածությունը,
4. ազգային ավանդույթները և բարոյական նկարագիրը»¹⁰:

Այսպիսով, ինտերնետի իրավական կարգավորումը կամ ինքնակարգավորումն անխուսափելի գործընթաց է, որի արդյունքում պաշտպանվում է թե՛ տեղեկատվական հասարակության անվտանգությունը, թե՛ մարդկանց մասին մասնավոր բնույթի տեղեկատվության տարածումը: Այն կարող է նպաստել նաև ապատեղեկատվության, զրպարտության և անվանարկման, գրագողության դրսևորումների նվազեցմանը: Ուստի, ոլորտի կարգավորումը պետք է իրականացվի՝ նախևառաջ հաշվի առնելով անբարեխիղճ տեղեկատվությունից քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը:

¹⁰ www.komionline.ru/